community

The New Apostolic Church around the world

03/2022/AM

Միասնություն Քրիստոսի հետ և Քրիստոսով

Խմբագրական
Ընտրված՝ ծառայելու համար

Ժամերգություն
Միասնություն Քրիստոսի հետ և Քրիստոսով

Եկեղեցական ուսմունք
Էվթանազիայի և պալիատիվ բժշկության միջև

New Apostolic Church
International

Ընտրված լինել ծառայելու համար

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Իմ սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

,, ընտրություն,, թեմայով ես շատ եմ զբաղվում: Մենք դեռ հակված ենք մտածելու, որ բոլորս այն բանի համար ենք ընտրվել, որպեսզի ժամանակի վերջում փրկվենք: Աստված մեզ ընտրել է, մենք փրկվելու ենք, իսկ մյուսները՝ ոչ:

Բայց դա պարզապես այդպես չէ: Այս առումով մի պարզ օրինակ՝ մենք բոլորս ճանաչում ենք այնպիսի հավատացյալ քույր-եղբայրների կամ ընտանիքի անդամների, ովքեր ոչ մի հետաքրքրություն չունեն Աստծո նկատմամբ, այլևս ոչ մի ժամերգության չեն հաճախում, Աստծո հետ այլևս ոչ մի հարաբերություն չունեն: Արդյո՞ք պետք է մենք նրանց մասին ասենք, որ նրանք ընտրված չեն, որ նրանք կորչելու են: Ով իր մեջ մերձավորի հանդեպ սիրո մի կայծ ունի, չի կարող այդպես մտածել: Դա չի կարող ընտրված լինելու մասին մեր ըմբռնումը լինել:

Սակայն, ի՞նչ է ,, ընտրությունը,,: Ընտրություն՝ նշանակում է ծառայության կանչված լինել: Դու ընտրված ես, որպեսզի ծառայես Տիրոջը և աջակցես այն բանին, որ նրա փրկությունը տեղեկացվի բոլոր մարդկանց: Սա է ընտրությունը: Սա հավանաբար մի քիչ ոչ հարմար է հնչում, բայց դա կարող ենք նույնացնել մերձավորի հանդեպ սիրո հետ:

Դու ընտրված չես, որպեսզի փրկվես, իսկ մյուսները՝ կորչեն, դու կանչված ես ծառայելու Տիրոջն ու մարդկանց: Սա է ընտրությունը: Ընտրություն՝ ծառայելու համար:

Սրտանց ողջույններ,

Ձեր՝ Ժան-Լյուք Շնայդեր

Միասնություն Քրիստոսի հետ և Քրիստոսով

Թեև Կալգարիում / Կանադա/ տեղի ունեցած ժամերգությանը ներկա էին տեղի շուրջ 230 հավատացյալ քույր-եղբայրներ, բայց ավելի քան 13 500 հոգի էլ համացանցի միջոցով էր մասնակցում ժամերգությանը

Լուսանկարները՝ ՆԱԵ Կանադա

Հովհաննես 1-ին 1,3

Ինչ որ տեսանք և լսեցինք, պատմում ենք ձեզ, որպեսզի դուք էլ հաղորդակից լինեք նրան մեզ հետ, ինչպես որ մենք հաղորդություն ունենք Հոր հետ և նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հետ:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, ես կարծում եմ, որ մեզնից շատերը շատ շնորհակալ են մեր երկնային Հորը, որ մենք կարողանում ենք այս ժամերգությունն այստեղ՝ Կալգարիում միասին տոնել և ապրել, և, որ Հյուսիսային Ամերիկայի շատ եղբայրներ ու քույրեր կարողացել են միանալ մեզ: Մենք շնորհակալ ենք նրան, որ նա լսում է մեր աղոթքները և մենք կարողանում ենք հավաքվել, որպեսզի ընդունենք Աստծո պատգամը, որը տեղեկացվում է Սուրբ Հոգու միջոցով:

Սուրբ Հոգու առաջին պատգամն այս է՝ ոչ ոք մոռացված չէ Աստծո կողմից: Ես կցանկանայի այս պատգամն ամենից առաջ նրանց ուղղել, ովքեր կարիքի և զրկանքների մեջ են: Այդպիսիք շատ են: Ամեն ինչ պտտվում է Կովիդի շուրջը: Սակայն, միաժամանակ առօրյա կյանքը շարունակվում է: Շատ եղբայրներ և քույրեր ստիպված են հիվանդություններով ապրել, մյուսները տխուր են, շատերը պայքարում են մասնագիտության մեջ, ընտանիքում, գործընկերության մեջ առկա խնդիրների դեմ կամ ունեն ֆինանսական խնդիրներ: Հավանաբար մտածում են, որ իրենք մոռացված են, քանի որ խոսքը միայն դեռ Կովիդի մասին է: Ոչ ոք Աստծո կողմից մոռացված չէ: Նա գիտի քո մտքերը, նա գիտի քո խնդիրները, նա կիսում է քո ցավը: Վստահի՝ր նրան: Նա օգնելու է:

Սակայն, ես կցանկանայի այս պատգամն ուղղել նաև նրանց, ովքեր կանգնած են կյանքի արևածագին մոտ, ովքեր շատ գեղեցիկ պահեր են ապրում, ովքեր պարզապես երջանիկ են, ովքեր Աստծո ներկայությունն ու օրհնանքն են ապրում: Հավանաբար նրանք գիտակցում են, որ նրանց մոտ ամենից լավ է: Դուք դրա կարիքը չունենք: Հիսուսը կիսում է ձեր ուրախությունը: Ուրախացեք

այն օրհնանքով, որը Աստված ձեզ է տալիս և շնորհակալություն հայտնեք համապատասխան ձևով: Ոչ ոք մոռացված չէ մեր երկնային Հոր կողմից:

Անգամ այս դժվար, առանձնահատուկ ժամանակներում մեզ համար մեր առաջնայնությունների, մեր կյանքի գլխավոր նպատակների մեջ ոչինչ չի փոխվել: Մենք ուզում ենք նախապատրաստված լինել Քրիստոսի գալստյանը: Այդ պատճառով ենք մենք այսօր այստեղ, դրա համար էլ մենք հավատում ենք Քրիստոսին: Մենք ուզում ենք հավիտենական միասնություն ունենալ Աստծո հետ: Մենք ուզում ենք միասնություն ունենալ Հայր, Որդի և Սուրբ Հոգի Աստծո հետ: Մենք ուզում ենք Քրիստոսի հետ հավերժ ապրել նրա արքայությունում: Սա է մեր գոյության պատճառը, քրիստոնեկան հավատի իմաստը: Խոսքն այն մասին չէ, որ երջանիկ լինեն երկրի վրա, հաջողակ լինեն, խնդիրներ չունենան, հարուստ դառնան և այլն: Քրիստոնյան մեծ ցանկություն ունի Քրիստոսի հետ հավերժ միասնության մեջ ապրելու: Այլապես Քրիստոսն իզուր կզոհաբերվեր: Մենք ուզում ենք Աստծո հետ միասնություն ունենալ նրա արքայության մեջ: Մենք ուզում ենք մասնիկը լինել Հայր, Որդի և Սուրբ Հոգի Աստծո միասնության: Դրա համար էլ մենք ունենք այս նշանաբանը՝ ,, Միասին՝ Քրիստոսով,,: Սա փրկության պլանի հաջորդ քայլն է:

Հովհաննեսի նամակի հեղինակը ասում է, որ Աստծո հետ կարող են միայն այն դեպքում միասնություն ունենալ, եթե միասնություն ունենան առաքյալների հետ: Դրա համար կա մի պատճառ՝ այն ժամանակներում, սկզբնական եկեղեցում, մի քանի տասնամյակներ անց տարբեր ըմբռնումներ կային անձի և Հիսուս Քրիստոսի բնույթի մասին: Մի քանիսն ունեին այս, մյուսները՝ այլ պատկերացում: Հասկացան, որ այդպես չի կարող լինել: Դրա համար էլ հեղինակն այս նամակում ասում է, որ, ով ուզում է միասնություն ունենալ Հիսուս Քրիստոսի հետ, ապա պետք է միասնություն ունենա առաքյալների հետ, նա պետք է հավատա առաքյալների ուսմունքին, նա պետք է հավատա նրանց վկայությունը, ովքեր տեսել և լսել են Հիսուս Քրիստոսին, երբ նա երկրի վրա էր, ովքեր հանձնարարություն են ստացել մյուսներին ուսուցանելու այն, ինչը Հիսուսը սովորեցրել է նրանց: Չեն կարող Հիսուսի հետ միասնություն ունենալ, եթե չհավատան առաքյալների վկայությանը, ուսմունքին, ինչպես այն գրված է նոր կտակարանում:

Հիսուս Քրիստոսը զգուշացնում էր, որ շատ մարդիկ են լինելու, ովքերն ասելու են՝,, Ահա այստեղ է Քրիստոսը, տես, նա է,,/ Մարկ. 13,21/: Նա պատում էր այն մարդկանց մասին, ովքեր ասելու են, որ իրենք ուղարկվել են Քրիստոսի կողմից , ովքեր մեծ հրաշքներ են կատարելու, ովքեր մարգարեություն են անելու Քրիստոսի մասին, ովքեր դևեր են հանելու- և ովքեր շատ հաջողակ են: Հիսուսը զգուշացնում է, որ նրանցից ոչ բոլորն են իր կողմից ուղարկված լինելու / հմտ. Մարկոս 13, 21-23, Մատթեոս 7, 22,23/:

Նորառաքելական եկեղեցու առաջադրանքը տարբեր եկեղեցիների դասակարգումը չէ և ասելու, թե որն է լավ, իսկ որն է վատ եկեղեցի; Դա մեր գործը չէ: Այսօր առաքյալների առաջադրանքն է տեղեկացնել Հիսուս Քրիստոսի ուսմունքը, ինչպես տեղեկացվում է Սուրբ Գրքում առաքյալների մասին: Յուրաքանչյուրը կարող է քարոզել և գործել, ինչ ուզում է, սակայն, մեր առաջադրանքը նախապատրաստումն է Աստծո արքայություն գնալ կարողանալու համար, Քրիստոսի հետ միասնություն ունենալ կարողանալու համար: Դրա համար մենք պետք է հավատանք առաքյալների ուսմունքին, նրանց վկայությանը, ովքեր նրա հետ եղել են երկրի վրա: Ի՞նչ են ասել նրանք: Ի՞նչ են տեղեկացրել նրանք: Ի՞նչ է ասել Հիսուսն ինքն իր մասին: Թույլ տվեք հինգ կետ նշել՝

Առաջին կետը՝ Հիսուսն ասում էր, որ ամբողջ Գիրքը- այսինքն՝ մեզ համար այսօր Հին կտակարանը- նրան մասին է խոսում / հմտ. Հովհ 5,39; Ղուկ. 24,44/: Հիսուսի աչքերով Հին կտակարանը տեղեկացնում է նրա գալստյան մասին: Դա նշանակում է, որ առաքյալների ուսմունքին է պատկանում այն, որ Հին կտակարանը պետք է Հիսուս Քրիստոսից ելնելով հասկանան և մեկնաբանեն: Այն, ինչ Հին կտակարանում մեր փրկությանն է վերաբերում, դա այն է, ինչ կապված է Հիսուս Քրիստոսի հետ: Չենք կարող հենց այնպես Հին կտակարանի մի հատվածից մի նախադասություն վերցնել և ասել՝ ,, Սա այսօր մեզ համար է,,: Այն, ինչը Հին կտակարանում վերաբերում է մեզ, մեր փրկությանը, պետք է Ավետարանի լույսի ներքո Հիսուս Քրիստոսի խոսքերի և գործերի հիման վրա հասկանալի դառնա: Սա շատ կարևոր է:

Հիսուս Քրիստոսն ասում էր նաև, որ նա չի եկել, Հոր կողմից չի ուղարկվել, որպեսզի մեղավորներին պատժի: Ընդհակառակը՝ նա ուղարկվել է մեղավորներին փրկելու համար: Հովհաննես Մկրտիչը դա սխալ էր հասկացել,

Ոչ ոք չի մոռացվում մեր երկնային Հոր կողմից:

նաև՝ աշակերտները: Նրանք կարծում էին, որ պետք է պատժել: Հիշեք Պետրոսին՝ նա ուզում էր պատժել և կտրել այն քահանայապետի ականջը, ով ձերբակալել էր Հիսուսին: Հիսուսը դա մերժում է / հմտ. Ղուկ 22,49-51/: Մեկ ուրիշ անգամ աշակերտներն ուզում էին կրակ թափել երկնքից, որպեսզի պատժեն մեղավորներին: Դա ևս նա մերժեց/հմտ. Ղուկաս 9, 51-56/: Նա չի եկել, որպեսզի պատժի մեղավորներին, այլ, որպեսզի փրկի նրանց: Առաքյալների ուսմունքը մեզ ասում է, որ ոչ մի մարդ Հիսուսի կողմից չի ուղարկվի, որպեսզի իր անունով մեղավորներին պատժի: Ոչ ոք դա չի կարող հաստատել: Հիսուս Քրիստոսը Փրկիչ է: Իհարկե, հասարակությունը պետք է կանոններ մշակի և հանցագործներին պատժի: Հիսուսը դրան դեմ չէր: Նա հարգում էր իր ժամանակների հասարակական կանոնները: Սակայն, ոչ ոք իրավունք չունի Հիսուս Քրիստոսի անունով և առաջադրանքով որևէ մեկին պատժել: Դա չի համապատասխանում նրա ուսմունքին:

Հիսուսը հաղթել է չարին և ցանկանում է իր հաղթանակը կիսել մեզ հետ:

Հիսուսը նաև ասում էր, որ իր արքայությունն այս աշխարհից չէ / հմտ. Հովի 18,36/: Նա դրանով ուզում էր ասել, որ նա երկիր չի եկել, որպեսզի մարդկանց բոլոր երկրային խնդիրները լուծի, որ նա չի եկել, որ նրանց թագավորը դառնա, որպեսզի նրանց երկիրը ղեկավարի: Հրեա ժողովուրդը հիասթափված է, քանի որ նրանք սպասում էին, որ նա իրենց կազատի հռոմեացիներից և բոլոր խնդիրները կլուծի: Նրանք ուզում էին, որ նա աղքատներին հարստացնի և հիվանդներին բուժի: Հիսուսը դա մերժում էր: Նրա արքայությունն այս աշխարհից չէր: Նա չէր եկել, որ մեղքերի և կանոնների նոր գրացուցակ կազմեր: Նա միայն ասում էր՝ ,, Սիրիր Աստծուն և քո մերձավորին,, / հմտ . Ղուկաս 10,27/:

Նա համաձայն չէր փարիսեցիների և նրանց կանոնների ու օրենքների երկար ցանկի հետ: Հիսուսը չէր եկել, որպեսզի ղեկավարի աշխարհը: Ավետարանը մարդկանց երկրային խնդիրները լուծելու առաջարկների ցուցակ չէ: Եթե մենք խնդիրներ ունենք, ապա նրա համար, որ աշխարհը չարի տիրապետության տակ է: Ոչ մի մարդ չի կարող այդ խնդիրը լուծել: Կա միայն մեկ Փրկիչ, և դա Հիսուս Քրիստոսն է: Նա ցանկանում է լուծել մեզ չարից ազատելու խնդիրը: Նա ուզում է մեզ իր արքայություն տանել, իսկ հետո՝ նոր արարչագործություն, որտեղ չարի համար ոչ մի տեղ չկա, տառապանք և մահ չկա: Սա է Հիսուս Քրիստոսի փրկության օրենքը: Նա մեզ ասում է, թե մենք ինչ պետք է անենք, որպեսզի փրկվենք և իր արքայություն գնանք, որտեղ այլևս ոչ մի խնդիր չկա և չարն այլևս գոյություն չունի: Սա է Հիսուս Քրիստոսի ուսմունքը:

Քրիստոսի ուսմունքն է նաև, որ Աստծո Որդին երկիր գա, ճշմարիտ մարդ դառնա և որպես այդպիսին չարին և մահվանը հաղթի: Դրանով նա ձեռք է բերում մեծ վաստակ, որը որ մի մարդ չի կարող ունենալ, քանի որ նա արել է այն, ինչ չի կարող անել ոչ մի մարդ: Նա հարյուր տոկոսով հաղթել է չարին ու մահին / հմտ. Փիլ 2,5-8/: Եվ նա ուզում է իր վաստակը մեզ հետ կիսել, նա ցանկանում է իր հաղթանակը մեզ հետ կիսել, որովհետև նա գիտի, որը մենք միայնակ ի վիճակի չենք: Մենք պետք է միայն նրան հավատանք, նրան վստահենք և նրա էության հետ միասնական լինենք: Պողոսն ավելացնում է, որ մենք նրա տառապանքները պետք է կիսենք / հմտ. Փիլ 3,10/: Հիսուսը երկիր չի եկել, որպեսզի մեր բոլոր խնդիրները լուծի, նա ցանկանում էր, որ մենք փորձության ժամանակ հաստատուն և հավատարիմ մնանք, նա ցանկանում էր, որ մենք նրա հետ լինենք նաև տառապանքի ժամանակ:

Դա նշանակում է, որ եթե մենք տառապում ենք, ապա պետք է դա այն ձևով անենք, ինչպես նա էր տառապել: Տառապանքի ժամանակ էլ պետք է Աստծուն սիրենք, վստահենք, հնազանդ ու հավատարիմ մնանք մինչև վերջ: Դա է միասնությունը նրա հետ նրա տառապանքի ժամանակ: Սա է Հիսուս Քրիստոսի ուսմունքը:

Վերջին կետը, որ ես կուզենայի նշել՝ նա ասում էր, թե մենք ինչ պետք է անենք, որպեսզի նրա արքայություն գնանք – դա նորառաքելական եկեղեցու հայտնագործությունը չէ: Նա ասում էր, որ պետք է վերստին ծնվեն ջրով և Սուրբ Հոգով, որպեսզի նրա արքայություն գնան / հմտ. Հովի 3,3/: Մենք պետք է ընդունենք Աստծո կյանքը, որպեսզի Հայր, Որդի և Սուրբ Հոգի Աստծո հետ կարողանանք միասնություն ունենալ: Նա նաև ասում էր, , որ նա, ով ուզում է հասնել հավիտենական կյանքի, պետք է ընդունի նրա արյունն ու մարմինը / հմտ. Հովի 6,54-56/: Մենք պետք է տոնենք Սուրբ Հաղորդությունը: Ով ուզում է հասնել հավիտենական կյանքի, պետք է ընդունի եկեղեցական խորհուրդները: Սիրելի եղբայրներ և քույրեր, աս առաքյալների ուսմունքի կարճ ամփոփում էր:

Երգչախումբը մեկ ընդ մեջ ուրախացնում էր ժամերգության մասնակիցներին։

Հին կտակարանը վերաբերում է նրան, որ մենք կապի մեջ լինենք Հիսուս Քրիստոսի ուսմունքի հետ և այն հասկանանք նրա խոսքերի և գործերի հիման վրա։ Հիսուս Քրիստոսը չի եկել, որպեսզի պատժի, այլ՝ փրկի։ Նա չի եկել, որպեսզի երկրային բոլոր խնդիրները լուծի և հասարակությանը ղեկավարի։ Նա եկել է, որպեսզի մեզ ազատի չարից և տանի իր արքայություն։ Նա հաղթել է չարին և ցանկանում է իր հաղթանակը մեզ հետ կիսել։ Այն ամենը, ինչը մենք պետք է անենք, դա նրան վստահելն է, նրա սերը կիսելը, նրան հավատալը և նրան հավատարիմ մնալը, անգամ, երբ մենք տառապենք, նաև մենք պետք է ընդունենք եկեղեցական խորհուրդները

Հովհաննեսի առաջին նամակում շարունակության մեջ գրված է, որ նրանք, ովքեր ցանկանում են Հիսուս Քրիստոսի և Հոր հետ միասնություն ունենան, պետք է նախ միմյանց հետ միասնական լինեն։ Չեն կարող Աստծո հետ միասնություն ունենալ, չեն կարող Աստծուն սիրել, եթե միմյանց չեն սիրում։ Սա անբաժանելիորեն կապված է մեկը մյուսի հետ։ Եթե մենք ուզում ենք Քրիստոսի հետ միասին լինել, ապա պետք է Քրիստոսով միասին լինենք։ Հիսուսը շատ հստակ դա պարզաբանում է։ Նա իր համերաշխությունն է հայտնում բոլոր հավատացյալներին, երբ նա ասում է. ,,Քանի որ իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ ինձ համար արեցիք,, / Մատթ. 25,40/։

Որպեսզի կարողանանք Հիսուս Քրիստոսի հետ միասնություն ունենանք, մենք պետք է կիսենք նրա զգացումները, նրա մտքերը։ Աստծո Որդին- նա Աստված է- ապրում էր երկքնում՝ Աստծո փառահեղությունում, որպեսզի երկիր գա և կիսի մարդկանց կյանքի պայմանները։ Նա կիսում էր նրանց ուրախությունը, նրանց տառապանքը, նրանց կյանքը։ Նա անգամ մահացավ, քանի որ մարդիկ էլ պետք է մահանան։ Նա թողեց իր փառահեղությունը, որպեսզի իր համերաշխությունը ցույց տա և լինի այն, ինչ մենք ենք -մարդկային էություն- մարմին, որպեսզի մեզ փրկի։ Եթե մենք Հիսուս Քրիստոսի այդ սերը կրենք մեր սրտերում, ի՞նչ տեղի կունենա։ Այդ դեպքում մենք կկիսենք մեր մերձավորի վիճակը։ Մենք պատրաստ ենք թողնել մեր հարմարավետ տարածքը և օգնել, երբ տեսնենք, որ մեր մերձավորը տառապում է, որ նա ինչ-որ բանի կարիք ունի։ Դա հեշտ չէ։ Ավելի հեշտ է բանի տեղ չդնելը նրան, ով տառապում է։ Ես հաճախ եմ մտածում, որ տառապանքը վարակիչ է, քանի որ, եթե մեկը դժբախտ է, մյուսներն ամեն ինչ անում են նրան իրենց ճանապարհից հեռացնել։ Բայց դա վարակիչ չէ։ Թողնենք մեր հարմարավետ տարածքը, որպեսզի օգնենք մեր մերձավորին, կիսենք նրա ցավն ու տառապանքը, մխիթարենք նրան և օգնենք։ Իր յուրայիններին Հիսուսի ամենամեծ խնդրանքը այն էր, որ նրանք պետք է միասնական լինեն, ինչպես միասնական են ինքն ու Հայրը / Հովհ. 17,20,21/։ Հիսուսը գիտեր, որ հնարավոր չէ մաս կազմել Հոր և Որդու միասնությանը, եթե աշակերտների շրջանակում միմյանց հետ միասնություն չկա։ Նա հորդորում էր նրանց՝ միմյանց օգնել-,, Ինչ դուք անում եք նրան, անում եք ինձ համար,,։ Ուրեմն՝ մեկ անգամ ևս՝ եթե մենք ուզում ենք միասնություն ունենալ Քրիստոսի հետ, պետք է միմյանց հետ միասնություն ունենաք Քրիստոսով։

Որպեսզի այս առումով Աստված մեզ օգնի, մեզ համար հնարավոր դարձնի Աստծո և միմյանց հետ միասնությունը, նա ուղարկել է առաքյալներին։ Առաքյալների ծառայության միջոցով մենք ստանում ենք այն ամենը, ինչի կարիքն ունենք, որպեսզի միասին լինենք Աստծո և միմյանց հետ։ Այս առումով խոսքը գնում է ոչ թե անձի մասին, այլ՝ պաշտոնի։ Առաջին բանը, որ մեզ օգնում է միասնական լինել, դա առաքյալների ուսմունքն է -և ես հիմա խոսում եմ այսօր ապրող առաքյալների մասին։ Ես այնքան շնորհակալ եմ, որ մենք Նորառաքելական եկեղեցում միասնական

Գլխավոր առաքյալ Շնայդերը չորս առաքյալ է ձեռնադրում ԱՄՆ-ի համար՝ Լոննիե Քլայնին, Մարկ Ֆոյերբախին, Ջոն Շնաբելին նև Բրեթթ Շթայնբրուքին:

ուսմունք ունենք: Մենք ունենք միասնական հավատ, հավատի դրույթներ, դավանաբանություն: Ինչ տխուր կլիներ, եթե մենք մինչ առաքյալին լսելը ստիպված լինեիք ստուգել, թե նա որ էջից է կարդում, Սուրբ գրքի ինչ մեկնաբանություն է տալիս և հետևում Ավետարանին: Մեր եկեղեցում դա պարզ է: Մենք ունենք մեկ հավատամք, մեկ ուսմունք, մեկ Վարդապետ, մեկ դավանաբանություն և մեկ նպատակ: Եթե մենք միասնական ենք առաքյալների ուսմունքի մեջ, հեշտ է միմյանց հետ միասնական լինելը: Եթե յուրաքանչյուր քարոզիչ և յուրաքանչյուր հավատացյալ իր անհատական մեկնաբանությունն է ունենում, ապա միասնականությունն անհնար է լինում: Որտեղ գործում է Սուրբ Հոգին, այնտեղ նա գործում է միասնականության համար:

Առաքյալները մեզ տեղեկացնում են նաև մեղքերի քավության մասին: Երբ առաքյալը կամ նրա կողմից հանձնարարված քարոզիչը տեղեկացնում է՝ ,, Ձեր մեղքերն են ներված,,; ապա մենք կարող ենք Հիսուսի ողորմածության վրա վստահ լինել: Առանց մեղքերի քավության՝ մենք՝ որպես մեղավորներ, չենք կարող միասնություն ունենալ Աստծո հետ, չենք կարող գնալ նրա արքայություն: Մենք պետք է մեր մեղքերի ներման միջոցով մաքրվենք:

Առաքյալների կողմից ենք ընդունում են Սուրբ մկրտության և Սուրբ կնունքի խորհուրդները ու դրանցով և՝ աստվածային կյանքը: Ինչպե՞ս կարող ենք Աստծո հետ միասնություն ունենալ, եթե մենք մեր մեջ չկրենք աստվածային կյանքը: Հիսուս Քրիստոսով նոր արարածը -և միայն նա- ունակ է Աստծո արքայություն գնալ: Մենք պետք է դառնանք նոր արարած, որպեսզի կարողանանք հավիտենական միասնություն ունենալ Աստծո հետ, իսկ դա նվիրաբերվում է Հիսուս Քրիստոսի կողմից ուղարկված առաքյալների միջոցով- ,, Մկրտվեք,, / Մատթ. 28,19/: Առաքյալների միջոցով մենք ընդունում ենք Սուրբ Հոգու շնորհները:

Վերջին կետը՝ որտեղ Սուրբ Հոգին գործում է առաքյալների ծառայության միջոցով, այնտեղ կարող ենք տոնել Սուրբ հաղորդությունը և ընդունել այն, ինչն անհրաժեշտ է մեր փրկության համար-Հիսուս Քրիստոսի արյունն ու մարմինը: Հիշեք այս մասին՝ ,, Եթե դուք չուտեք իմ մարմնից,,: Առաքյալների ծառայության միջոցով մենք ստանում ենք Հիսուս Քրիստոսի արյունն ու մարմինը: Երբ համայնքը տոնում է Սուրբ Հաղորդությունը, ապա Հիսուսի արյունն ու մարմինը կենդանի են դառնում: Հիսուսն այլևս որպես հյուր չէ կամ միայն մեր հիշողության մեջ չէ ներկա: Ոչ, նա ճշմարտապես մարմնով և արյամբ է ներկա: Սա գաղափար չէ, սա կոնցեպտ չէ կամ ոգեշնչություն: Ոչ: Երբ մենք Սուրբ Հաղորդությունը տոնում ենք առաքյալների շրջանակում, մենք կարող ենք վստահ լինել, որ այդ պահին Հիսուսը մարմնով և արյունով ներկա է: Նա իսկապես այդտեղ է, նա մեզ հետ է, նա մեր կողքին է: Դա մենք կարող ենք իմանալ: Նա այլևս մեռելների թագավորության մեջ չէ, նա ողջ է ու նա այստեղ է:

Ի՞նչ է տեղի ունենում, երբ նա ներկա է լինում: Ի՞նչ էր տեղի ունենում, երբ Հիսուսն իր աշակերտների շրջանում էր: Նա թույլ չէր տալիս նրանց ուրիշներին դատապարտել: Դա նրանց առաջադրանքը չէ: Շատ խնդիր է լուծվում միայն նրա համար, քանի որ Հիսուսն այնտեղ էր: Երբ մենք տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, Հիսուսն այստեղ է: Նրա միջոցով, նրա մարմնի և արյան միջոցով մենք ընդունում ենք նրա էությունը: Նա սնում է նոր արարածին, և մենք կարողանում ենք աճել, որպեսզի Աստծո արքայություն մտնելու համար պատրաստ լինենք: Սուրբ Հաղորդությունը նաև մեզ օգնում է միմյանց հետ Քրիստոսով միասնություն ունենալ: Աստվածաշունչն ասում է, որ մենք մի մարմին ենք, որովհետև մենք բոլորս մեկ հացից բաժին ունենք / հմտ. Կորնթ. Ա 10,17/: Երբ մենք ընդունում ենք Սուրբ Հաղորդությունը, կարողանում ենք տեսնել, որ մենք բոլորս նույն հացից ենք ստանում: Այդ հացը մի կողմից խոսքն է, Հիսուս Քրիստոսի ուսմունքն է, մյուս կողմից՝ Հիսուսի մարմինն ու արյունը: Եվ մենք բոլորս ստանում ենք նույն բանը: Ամբողջ համայնքը կարող է տեսնել, որ Աստծո յուրաքանչյուր զավակ, յուրաքանչյուր հավատացյալ, նույն ուսմունքն ու նույն խորհուրդն է ստանում, և բոլորի համար դա իր ներգործությունն է ունենում՝ անկախ անձից կամ իրավիճակից, որում նրանք գտնվում են: Գործնականում մենք կարող ենք կյանքի առանձին

իրավիճակներում համայնքի ներսում շատ տարբեր լինել, բայց, երբ մենք տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, կարող ենք տեսնել, որ կա միակ հացը: Նպատակը բոլորի համար նույնն է: Մենք պետք է բոլորս նույն ճանապարհով գնանք և դրան հավատանք:

Մենք ապրում ենք մի ժամանակում, երբ շատ արժեքներ են ներդրվում մյուսներից սահմանազատվելու նպատակով: Երբեմն ինձ թվում է, որ մարդիկ անգամ պաշտամունք են դարձնում իրենց տարբերությունները, որպեսզի ցույց տան՝,, Ոչ, ես այնպիսին չեմ, ինչպես՝ դու: Դուք պետք է ինձ հարգեք: Ես ուրիշ եմ,,: Սա ևս նորմալ է: Մենք պետք է ընդունենք մեր մերձավորի այլ լինելը: Սրա մասին չպետք է բանավիճենք: Սակայն, մեր նպատակը չպետք է լինի մեր տարբերությունները շեշտելը և վկայակոչելը: Մեկ հաց: Մենք մեկ մարմին ենք: Շեշտենք այն, որ մենք միասին ենք Քրիստոսով: Մեր տարբերությունները կարևոր չեն, կարևորն այն է, որ բոլորիս փրկությունը նույնն է: Այն ճանապարհը, որը մենք պետք է գնանք, բոլորիս համար նույնն է: Եկեք դադարեցնենք մեր տարբերությունները պաշտամունք դարձնելը: Այո, մենք հարգում ենք մեր մերձավորի այլ լինելը, բայց եկեք կենտրոնանանք այն բանի վրա, ինչը մենք միասին ունենք:

Երբ Հիսուսը հիմադրեց Սուրբ Հաղորդությունը, նախ նա աշակերտներին տվեց հացը: Հետո վերցրեց գինով բաժակը, տվեց առաջին աշակերտին և ասաց. ,, Բոլորդ խմեք դրանից,,/ Մատթ. 26,27/: Կար միայն մեկ բաժակ, այնպես որ՝ առաջինը բաժակը փոխանցեց երկրորդին, երկրորդը՝ երրորդին և այսպես շարունակ, այսպես բաժակը պտտվեց աշակերտների շրջանում: Հիսուսն ասաց . ,, . . . այդ է նոր ուղտի իմ արյունը, որ թափվում է շատերի համար՝ իրենց մեղքերի թողության համար,, / Մատթ. 26,28/: Սա մի գեղեցիկ պատկեր է: Այդ բաժակը գինով լի՝ Հիսուսի արյունով լի, պտտվում է աշակերտների շրջանակում այնպես, ինչպես արյունն է մարմնի մեջ շրջանառվում: Մեկ արյուն, մեկի մարմին: Իհարկե, պրակտիկ պատճառով մենք այսօր Սուրբ Հաղորդությունը տոնում ենք նշխարով, որը պարունակում է գինի, բայց նշանակությունը նույնն է: Երբ մենք տոնում ենք Սուրբ Հաղորդությունը, Հիսուսի արյունը հոսում է դեպի համայնք, որտեղ այն շրջանառվում է: Մենք գիտակցում ենք, որ մենք բոլորս Հիսուս Քրիստոսի արյան միջոցով պետք է մաքրվենք, այլապես մենք փրկություն, ազատում չենք ունենա: Մենք կարիք ունենք մեղքերի քավության: Մենք լիովին կախված ենք դրանից: Մեր մարմնի յուրաքանչյուր մասնիկ, որում արյուն է շրջանառվում, կախված է դրանից: Պողոսն ասում էր. ,, Աչքը չի կարող ասել ձեռքին, թե՝ ինձ պետք չես, և կամ նույն ձևով գլուխը՝ ոտքերին, թե՝ ինձ պետք չեք,, / Կորնթ. Ա 12,21/: Սա մի գեղեցիկ պատկեր է համայնքի համար, եկեղեցու համար, եկեղեցու միասնության համար, հավատացյալների միավորման համար: Մենք բոլորս լիովին կախված ենք Հիսուս Քրիստոսի արյունից: Դա օգնում է մեզ՝ լինել միասնական, և դա այն է, որը մենք կարող ենք ապրել, երբ Սուրբ Հոգին գործի առաքյալների ծառայության միջոցով:

Վերջին կետը Սուրբ Հաղորդության մասին՝ երբ մենք այն տոնում ենք, ապա դա նախաճաշակումն է մեծ Հաղորդության, որը մենք մեր Տեր Հիսուս Քրիստոսի հետ երկնքում ենք տոնելու: Դա մեզ հիշեցնում է այն մասին, որ մենք բոլորս նույն ապագան ունենք, և այդ ապագան լինելու է մեր ուրախությունը: Ինչպիսի իրավիճակում էլ մենք լինենք, մենք ունենք նույն ապագան, և երբ մենք տոնենք Սուրբ Հաղորդությունը, միասին բոլորս ասենք՝,, Ինչ էլ լինի, նա գալու է,,: Դա մեր համոզվածությունն է: Մարդիկ և սատանան կարողեն անել, ինչ ուզում են: Ոչ ոք չի կարող Հիսուսին խանգարել նորից գալու, որպեսզի մենք իր հետ իր արքայություն գնանք:

Իմ սիրելի եղբայրներ և քույրեր, տարվա մեր նշանաբանն է՝ ,,Միասին՝ Քրիստոսով,,: Մեր նպատակն է հավիտենական միասնություն ունենալ Քրիստոսի հետ: Դրա համար մենք պետք է հավատանք առաքյալների ուսմունքին, ինչպես այն գրված է Աստվածաշնչում: Մենք տեսնում ենք Հիսուսին այնպես, ինչպիսին նրան նկարագրել են աստվածաշնչյան առաքյալները: Որպեսզի Հիսուսի հետ միասնություն ունենանք, պետք է մենք միասնություն ունենանք միմյանց հետ: Երկուսն էլ՝ միասնությունը Աստծո հետ և միասնությունը միմյանց հետ, հնարավոր են, որովհետև մենք այն ամենը, ինչի կարիքն ունենք, ստանում ենք Սուրբ Հոգու ներգործության միջոցով, նրա կողմից ուղարկված առաքյալների միջոցով: Դա մեր գանձն է: Դա մեր հավատն է: Մենք շնորհակալ ենք մեր երկնային Հորը իր ողորմածության համար:

Հիմնական մտքեր

Մեր նպատակը Աստծո հետ միասնությունն է: Դրա համար մենք հավատարիմ ենք մնում առաքյալների ուսմունքին և միասնություն ենք կազմում հավատացյալների հետ: Սուրբ Հաղորդության միասնական տոնակատարությունը ուժեղացնում է մեր միասնությունն Աստծո և միմյանց հետ:

Առաքյալ Վոլֆգանգ Շուգի հովվական այցը Հայաստան

Լուսանկարը՝ Հայաստանի ԱԱԵ

Սպասավոր եղբայրների համար անցկացվող սեմինարի ընթացքում

Կովիդի համավարակը բացասական դեր խաղաց կյանքի բոլոր բնագավառներում, այդ թվում նաև՝ եկեղեցական կյանքում: Համավարակի պատճառով ավելի քան երկու տարի նորառաքելական եկեղեցու Գերմանիայի սպասավորներ եղբայրները չէին կարողանում այցելել Հայաստան: Այդ ընթացքում հայ նորառաքելական եկեղեցու հավատացյալ քույր-եղբայրները ժամանակ առ ժամանակ ժամերգություններ էին ապրում You Tube –ով, սակայն ժամերգությանն անհատապես ներկա գտնվելը բոլորովին այլ է, մանավանդ, երբ քարոզողը առաքյալ է: Վերջապես լույս երևաց թունելի վերջում, և առաքյալ Վոլֆգանգ Շուգը այցելեց հայ նորառաքելական եկեղեցու հավատացյալներին: Այս տարվա մարտ ամսվա վերջում առաքյալ Շուգը եղավ Հայաստանում, և հայ նորառաքեկալական եկեղեցու հավատացյալ քույր-եղբայրները առաքյալի հետ ժամերգություններ ապրելու հնարավորություն ունեցան: Առաքյալ Շուգը եղավ Հայաստանի հինգ համայնքներում, / Ալավերդի, Օձուն, Վանաձոր, Գյումրի, Երևան/, սակայն մյուս համայնքների հավատացյալները ևս մասնակցեցին ժամերգություններին, օրինակ, Ստեփանավանի համայնքը եկավ Վանաձոր, Սևանի համայնքը եկավ Երևան: Հավատացյալներն ուշադրությամբ էին լսում առաքյալի քարոզները, քանի որ նա շատ հասկանալի էր պարզաբանում աստվածաշնչյան խոսքերը: Աստվածաշնչից բերված բոլոր օրինակները վերաբերում էին բոլոր ժամանակների բոլոր մարդկանց :

Բերված բոլոր օրինակներն ու ընտրված աստվածաշնչյան դրվագները բացահայտում էին Աստծո ամենազոր և գթասիրտ կերպարը: Նշված օրինակներից հավատացյալները մեկ անգամ ևս հասկացան, որ իրենք կատարյալ չեն, թեև ստեղծված են Աստծո նմանությամբ, հասկացան, որ իրենք պետք է իրենց կյանքը ձևավորեն Աստծո կամքի համաձայն:

Առաքյալի այցը Հայաստան շատ հագեցած էր: Վանաձորում առաքյալ Շուգը ինտերակտիվ սեմինար անցկացրեց Հայաստանի բոլոր համայնքների սպասավոր եղբայրների մասնակցությամբ: Հարցերի և պատասխանների միջոցով շատ խնդիրներ ու խնդրանքներ պարզաբանվեցին: Բոլոր սպասավորները գոհ էին առաքյալից: Նրանք բարձր գնահատեցին նման սեմինարները, քանի որ դրանք շատ օգտակար են իրենց առաջադրանքների կատարման համար: Առաքյալ Շուգը նաև ձեռնադրություն կատարեց: Նա ձեռնադրեց սարկավագ Վանաձորի համայնքի համար: Առաքյալը խոստացավ, որ հնարավորություն սահմաններում սեմինարներ կկազմակերպի Հայաստանի և Վրաստանի սպասավորների հետ:

Առաքյալ Շուգը կատարում է ձեռնադրություն

ԿԱՅԵՆԸ ՉԻ ԼՍՈՒՄ ԱՍՏԾՈՒՆ

ԸՍՏ ՄՈՎՍԵՍԻ 1-ԻՆԻ 4, 1-16-Ի

Ադամն ու Եվան երկու որդի ունեին: Ավագ որդու անունը Կայեն էր, կրտսերինը՝ Աբել: Կայենը հողագործ էր, իսկ Աբելը՝ հովիվ:

Մի օր Կայենը դաշտի պտուղներից զոհաբերություն է մատուցում Աստծուն: Աբելն է իր ոչխարների հոտի առաջնեկներից ու գերերից է բերում: Աստված բարի աչքով է նայում Աբելին և նրա ընծաներին: Դրա համար Կայենը զայրանում է, նրա դեմքը մռայլվում է: Աստված հարցնում է Կայենին՝,,Ինչու՞ տրտմեցիր, ինչու՞ մռայլվեց դեմքդ: Չէ՞ որ եթե դու ինչ-որ բարի մտադրություն ունես, կարող ես չմռայլվել, բայց եթե ոչ մի բարի մտադրություն չունես, ապա մեղքը դարանակալում է քո դռան առաջ և քեզնից պահանջում, որ նրան չներես,,: Կայենն ասում է իր եղբայր Աբելին՝ ,, Արի գնանք դաշտ,,:

Եվ երբ նրանք դաշտում են լինում, Կայենը սպանում է իր եղբորը:
Աստված հարցում է Կայենին՝,, Որտե՞ղ է քո եղբայր Աբելը,,:
Նա պատասխանում է՝ ,, Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ,,:
Աստված ասում է ,, . Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ: Արդ, անիծյալ լինես երկրի վրա: Դու պիտի մշակես հողը, բայց նա չպիտի կարողանա քեզ տալ իր արդյունքը: Եվ դու այլևս հայրենիք չես ունենա,,:
Կայենը պատասխանում է Աստծուն. ,, Պատիժը շատ ծանր է, ես այն չեմ կարող տանել: Դու այսօր ինձ հանում ես երկրից, և ես պետք է թաքնվեմ քեզնից : Ես այլևս տուն չեմ ունենալու: Իսկ ով ինձ գտնի, սպանելու է,,:
Բայց Աստված ողորմած է: Նա նշան դրեց Կայենի վրա, որպեսզի ոչ մեկը, ով հանդիպի նրան, չսպանի՝ ,, Ոչ, նա, ով կսպանի Կայենին, յոթնապատիկ վրեժի կարժանանա,,: Եվ Կայենը հեռացավ Աստծուց:



Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 02/2022, Ձևավորումը՝ Միրելյա Ֆորտունատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԱՌԻԲՐԵՅԻՆ՝ ՊԱԼԱՏԻՆՈՒՄ /ԱՄՆ/

Իմ անունը Աուբրեյ է: Ես ապրում եմ Պալատինում, Իլլինոիսի Դաշնային պետության մի մեծ քաղաքում, դա Չիկագոյի մոտ է :

Ես ունեմ չորս քույր-եղբայր՝ իմ քույր Մաքենզիեն տասնմեկ տարեկան է, իմ եղբայր Քոլինը՝ հինգ: Իմ մյուս երկու կրտսեր քույրեր Էմերսոնը և Մալլորին երկվորյակներ են, նրանք երեք տարեկան են: Իմ մայր Բրիթթան աշխատում է որպես մաթեմատիկայի ուսուցչուհի, իսկ իմ հայր Միխայելը SS նախագծերի ղեկավար է:

Այստեղ դուք տեսնում եք ինձ Չիկագոյում ,, Ամպ դարպաս,, քանդակի առաջ, որը շատ մարդիկ սիրով ,, լոբի,, են անվանում: Ես կրում եմ անանուխի գույնի կանաչ վերնաշապիկ- անանուխի գույնի կանաչը իմ սիրելի գույնն է:

Մեր մեծ ընտանիքը ևս ապրում է Չիկագոյի մոտակայքում, այդ թվում՝ իմ տատիկ-պապիկները և բազմաթիվ հորաքույրերն ու մորաքույրերը, հորեղբայրներն ու մորեղբայրները: Իմ պապիկը հասարակական տրանսպորտային ընկերության ավտոբուսներն է վերանորոգում / Չիկագոյի տարանցիկ մարմին/:

Թեև մենք ապրումենք մեծ քաղաքի մոտ, բայց մեր տունը գտնվում է բնության պահպանության գոտու մոտ: Երբ եղանակը գեղեցիկ է լինում,

մենք հաճույքով զբոսանքներ ենք նախաձեռնում: Այս տարածքում շատ կենդանիներ կան, ինչպիսիք են եղնիկներ, արծիվներ, սագեր, հերոններ և բադեր: Երբեմն մենք տեսնում ենք նաև կոյոտներ: Հատկապես շատ լավ է լինում, երբ ժամանակ առ ժամանակ որևէ կենդանի է մտնում մեր այգին:

Մաքենզին, Քոլինը և ես հաճախում ենք նույն դպրոցը: Կորոնայի համավարակի պատճառով երկար ժամանակ մենք ստիպված էինք տանը սովորել, բայց հիմա մենք իրավունք ունենք նորից դպրոց գնալու: Ես շատ ուրախ եմ, որ ես կարող եմ իմ բոլոր ընկերներին նորից տեսնել: Դասերից հետո ես մասնակցում եմ մարմնամարզության դասընթացներին կամ սովորում եմ ֆուտբոլ խաղալ: Արդեն չորս տարի է, որ զբաղվում եմ մարմնամարզությամբ: Ավելի սիրով ես մարզվում եմ զուգահեռ ձողերով: Ֆուտբոլով սկսել եմ զբաղվել մեկ տարի առաջ և պետք է դեռ շատ սովորեմ, բայց անցած խաղաշրջանի վերջին խաղում ես մի գոլ եմ խփել:

Ամառային արձակուրդներին մենք մեկնում ենք արձակուրդի Հիլթոն Հոդ կղզի Հարավային Կարոլինայում: Ամենից սիրով ես իմ քույր-եղբայրների հետ լողում եմ Ատլանտիկում: Ես հաճույքով ուտում եմ նաև ծովամթերքներ, որոնք կան այնտեղ, ամենից առաջ ծովախեցգետին և միդիա:

Կորոնայի համավարակի պատճառով ստիպված մեր եկեղեցին էլ մեկ տարի փակ մնաց: Այդ ժամանակ մենք կարողանում էին Յու-թյուբի միջոցով տանից մասնակցել ժամերգություններին, որոնք անց էին կացնում մեր առաջյալները: Կիրակնօրյա դպրոցի պարապմունքները համացանցով Զում տարբերակով էինք անցկացնում: Երբ եկեղեցին փակ էր, Աղդիսոնում մեր համայնքի համար նոր եկեղեցի կառուցվեց, այն գրեթե պատրաստ է: Այն շատ գեղեցիկ է և հնից ավելի մեծ է: Ես հազիվ եմ կարողանում սպասել նոր եկեղեցու օծմանը մեր շրջանային առաքյալի կողմից, դրանից հետո մենք կարող ենք կիրակնօրյա պարապմունքներն այնտեղ անցկացնել:

Աղբյուրը՝ Անլայն՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 03/2022; լուսանկարները՝ մասնավոր©Drone Dood - stock.adobe.com

Լուսանկարը՝ Photographee.eu - stock.adobe.com

Էվթանազիայի և պալիատիվ բժշկության միջև

Մահվան մասին միտքը հաճախ վախեցնում է՝ տառապանք, միայնություն, ուրիշների հոգացության տակ լինել: Այդ պահին արագ ցանկություն է առաջանում կյանքի ավարտն ինքնուրույն որոշելու՝ ուսումնասիրության ենթակա տեսակետ, որի համար քրիստոնեական հավատքը կողմնորոշվելու օգնություն է առաջարկում:

Մեռնելուն օգնելը հաճախ է կապվում էֆթանազիայի հետ: Ի տարբերություն էվթանազիայի՝ այս դեպքում հիվանդն ինքն է իրեն մահվան հասցնում: Նրան այդ հարցում օգնում է մեկ այլ անձ (օգնություն):

Էվթանազիայի և ինքնասպանության օժանդակության վերաբերյալ օրենսդրությունը առանձնահատուկ և շատ տարբեր է յուրաքանչյուր երկրի համար: Սոցիալական բանավեճերը վերաբերում են օրինականացմանը: Համացանցում կարելի է գտնել առանձին երկրների համապատասխան օրենքները:

Մահանալուն օգնելը

Ինչ վերաբերում է մոտեցող մահվանը, անհրաժեշտ է կշռադատել, թե բժշկական որ տարբերակներն են կիրառվում: Հիվանդը, բժիշկներն ու հարազատները կպարզաբանեն, թե որքանով պետք է թույլ տրվի հիվանդության բնական ընթացքը: Եթե հիվանդն այլևս ի վիճակի չէ ինքնուրույն որոշումներ կայացնելու, բուժման չափը կարող է հնարավորինս որոշվել հիվանդի կտակի հիման վրա, որը շատ արդիական է: Եթե դա չկա, ապա, կախված օրենսդրությունից՝ բժիշկները կարող են նաև որոշում կայացնել՝ խորհրդակցելով հարազատների հետ:

Եթե թերապիան այլևս նպատակային բուժում չի տալիս կամ չի երկարացնում կյանքը, ապա հիմնականում կիրառվում են մեղմացնող միջոցներ այնպիսի գանգատների դեպքում, ինչպիսիք են օրինակ՝ ցավերը, շնչահեղձությունը և դրանց

ուղեկցող երևույթները: Մտադրությունը ոչ թե մահը մոտեցնելն է, այլ հիվանդության բնական ընթացքն ու մահանալը թույլ տալը: Սա ներառում է կյանքը երկարացնող միջոցառումներից հրաժարվելը (օրինակ՝ վերակենդանացում, արհեստական շնչառություն, արհեստական սնուցում, դիալիզ), կյանքը երկարացնող դեղամիջոցների կրճատում կամ որոշակի միջոցառումների չշարունակելը, բոլոր թերապևտիկ հնարավորությունների օգտագործման չիրականացումը: Սնուցումը և հեղուկները պետք է շարունակվեն տրվել այնքան ժամանակ, քանի դեռ դա օգնում է մահացող մարդուն՝ առանց նրան անհանգստություն պատճառելու:

Այս դեպքերում կարևոր է օգտագործել պալիատիվ խնամքը՝ վերացնելու կամ մեղմելու անհանգստացնող ախտանշանները, ինչպիսիք են ցավը, շնչառությունը և վախը: Նույնքան կարևոր են նաև խնամքային և մարդկային հոգացությունը կյանքի վերջում: Այստեղ շատ արժեքավոր դեր ունեն հիվանդանոցներն ու հիվանդանոցային ծառայությունները: Բոլոր մշակույթներում և կրոններում առկա է հարազատների և հոգին խնամողների ուղեկցությունը:

Չնայած բժշկական, հոգատար, մարդկային և հոգևոր խնամքին, կյանքի վերջում սաստիկ ցավ, մեծ վախ ու անհանգստություն է լինում: Ախտանիշները վերահսկելու համար կարող է տեղին լինել, հիվանդի կամ հարազատների հետ խորհրդակցելով, օգտագործել ցավազրկող և հանգստացնող դեղամիջոցների մեծ չափաբաժիններ: Որպես կողմնակի ազդեցություն կարող է լինել շնչառության նվազումը, իսկ հազվադեպ դեպքերում՝ կյանքի կրճատումը:

Էթիկական նկատառումներ

Ընդհանուր պահանջն այն է, որ մարդու արժանապատվությունը պետք է պահպանվի նույնիսկ մահվան ժամանակ: Եթե ակտիվ էվթանազիայի ջատագովները տեսնում են ինքնորոշված մահվան իրավունքի իրականացումը և հետևաբար հորդորում են կիրառել էվթանազիան ու ինքնուրույն մահվան հասնելու գործոնը, ակտիվ էվթանազիայի հակառակորդների հիմնական փաստարկը մարդու կյանքի անձեռնմխելիությունն է. ոչ ոք չի կարող ակտիվորեն վերջ տալ մարդու կյանքին:

Մարդու կամքի կատարումը կտակի միջոցով կամ դրա չկատարումը, դիտվում է որպես մարդկային արժանապատվությունը հարգելու կամ կասկածի տակ դնելու օրինակ: Որոշ գրություններում ինքնուրույն որոշումը նույնացվում է մարդկային արժանապատվության հետ:

Էվթանազիայի և ինքն իրեն մահանալուն օգնելու ջատագովների հիմնական փաստարկը տառապանքի կանխարգելումն է, որի հետ դժվար է վիճել:

Տառապանքների մեղմացումը բժշկության և ժամանակակից էթիկայի հիմնական նպատակն է: Տառապանքը հաճախ նույնացվում է ցավի հետ: Բայց տառապանքն ավելի շատ բացասական փորձառությունների մարմնացում է: Այն, ինչ ընկալվում է որպես անտանելի տառապանք, էապես կախված է մարդու տեսակետից: Անտանելի տառապանքի դեպքում օգնություն կարող է լինել այն, որ տառապանքը ցույց տրվի որպես առիթ բարձր բարիքներ զարգացնելու, ինչպիսիք են կյանքի փորձը կամ առաքինությունները: Սա նոր հեռանկներ է տալիս: Այնուհետև կյանքը կարող է իմաստ ունենալ և կարևոր լինել նույնիսկ ծանր խանգարումների կամ ծանր հաշմանդամության դեպքում: Սա հնարավորություն է տալիս տեսնել և ընդունել մահը որպես կյանքի վերջին մեծ առաջադրանք:

Էվթանազիայի հակառակորդների մտահոգությունն այն է, որ ընդլայվի ինչպես այն պայմանները, որոնց դեպքում պետք է թույլատրվի ակտիվ էվթանազիան (օրինակ՝ վերջին փուլում անբուժելի հիվանդությունների սահմանափակումը), այնպես էլ մարդկանց խումբը, ում համար այն պետք է թույլատրվի (օրինակ՝ միայն մեծահասակների համար): Օրինակ՝ այն երկրները, որոնք որոշակի պայմանների պարագայում օրինականացրել են ակտիվ էվթանազիան մեծահասակների համար, հետագայում դա թույլատրեցին նաև երեխաների համար: Ըստ ավանդական հասկացողության՝ բժիշկն օգնում է պայքարել հիվանդությունների դեմ: Հիվանդները վստահում են նրան, որ նա օգնում է իրենց առողջանալ: Երբ բժիշկներին թույլատրում են ակտիվորեն սպանել (սպանել ըստ պահանջելու), ապա վստահության այս կարևոր կապը կարող է լրջորեն խաթարվել: Մասնագիտական բժշկական կազմակերպությունները նշում են վստահության այս կորստի վտանգը: Այնուամենայնիվ, էվթանազիայի և ինքն իրեն մահանալուն օգնելու ջատագովները բժիշկների աջակցությունը համարում են տանելի մահվան օգնություն:

Մահանալ մարդկային արժանապատվությամբ

Էվթանազիայի մասին քննարկումները ամենից

շատ միակողմանի են և հիմնականում վերաբերում են այն հարցին, թե արդյոք էվթանազիան և ինքնասպանության օժանդակությունը, այսինքն՝ մահանալուն օգնելը էթիկապես արդարացված են և օրենքով թույլատրելի են կամ պահանջված:

Քրիստոնեական տեսանկյունից շատ ավելի կարևոր է այն ասպեկտը, որ հաճախ հետին պլան է մղվում մահանալուն օգնելու մեջ հնարավոր տառապանքը մեղմելու և հիվանդին ուղեկցելու փաստը:

Հավանաբար ոչ ոք չի ցանկանում կյանքի վերջում լինել միայնակ ու լքված և իրեն ավելորդ կամ նույնիսկ ուրիշների ողորմածության տակ զգալ: Հատկապես, կյանքի այս փուլում մարդկային արժանապատվությունը հարգելու համար անհրաժեշտ է խոհեմ, ուշադիր և զգայուն խնամք ու աջակցություն: Դրան կարող են նպաստել որակավոր պալիատիվ բժշկությունը և կյանքի վերջի պահի խնամքը:

Քրիստոնեական տեսակետներ

Քրիստոնեական տեսանկյունից կյանքը տրված է Աստծո կողմից: Աստծուն նվիրվածության շնորհիվ մարդիկ արժանապատվություն ունեն (Աստծո նմանությամբ)՝ անկախ իրենց կարողություններից և առողջական վիճակից: Ըստ այդմ, պահանջի համաձայն սպանելը, ինչպես և ինքնասպանության օժանդակությունը, խախտում է «Մի սպանիր» պատվիրանը:

Որպես Աստծո պարգև՝ կյանքը չպետք է կամայականորեն ավարտվի: Այնուամենայնիվ, դա չի նշանակում, որ պետք է օգտագործվեն նաև կյանքի երկարացման բոլոր հնարավոր տարբերակները: Քրիստոնեական տեսանկյունից մեղք չէ, եթե հիվանդները կամ մահացողները հրաժարվում են թերապիաներից կամ կյանքը երկարացնող միջոցներից, կամ եթե այդ բուժումներն ու միջոցառումները դադարեցվում են, քանի որ ծանր հիվանդները «ցանկանում են մեռնել խաղաղության մեջ»:

Հետևելով մերձավորին սիրելու պատվիրանին՝ ընտանիքին, համայնքին և հոգին խնամողներին կոչ է արվում հոգ տանել ծանր հիվանդների և մահացողների մասին այնպես, որ նվազի լքված լինելու և որևէ մեկի ողորմածության ներքո գտնվելու և մահանալու գործընթացը հաղթահարել չկարողանալու վախը: Ծանր հիվանդների և մահացողների համար մեծ նշանակություն ունի հարազատների և մասնագետ անձնակազմի կողմից սիրալիր և ուշադիր խնամքի հնարավորությունը հաճելի միջավայրում, տանը, հիվանդանոցում կամ պալիատիվ խնամքի բաժանմունքում:

Նույնքան կարևոր է այն գիտելիքը, որ պալիատիվ խնամքը շատ դեպքերում կարող է տանելի դարձնել կյանքի վերջում առաջացած ցավն ու անհանգստությունը: Բայց, չպետք է մոռանալ, որ նույնիսկ լավագույն հանգամանքները ամեն ինչ հեշտ չեն դարձնում: Մեռնելը, մահն ու կորուստը ցավալի են մնում մահացողների և նրանց շրջապատի համար:

Այնուամենայնիվ, մենք՝ քրիստոնյաներս, կարող ենք մխիթարություն և ուժ զգալ Աստծուն վստահելուց և նրա աջակցության ու նրան մոտ լինելու հույսից նաև դժվար իրավիճակներում: Մեր հավերժական կյանքի և Աստծո հետ մեր ապագայի մասին գիտելիքը կարող է նվազեցնել հրաժեշտի վախը:

Նորառաքելական եկեղեցու դիրքորոշումը

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատվորեն մեռնելու իրավունք. Էվթանազիան և պալիատիվ խնամքը վերաբերում են մահամերձ մարդուն, ում համար բուժման կամ բարելավման հեռանկար չկա: Քրիստոնեական տեսանկյունից սա կարող է օգնություն լինել միայն մահանալու ժամանակ և ոչ երբեք օգնություն՝ մահանալուն:

Պահանջելու համաձայն սպանելը, ինչպես և օժանդակված ինքնասպանությունը, խախտում է «Մի սպանիր» պատվիրանը:

Կյանքը երկարացնող միջոցներ չձեռնարկելով մահ թույլ տալը չի հակասում քրիստոնեական հավատքի սկզբունքներին: Ցավի թեթևացումը կամ հանգստացումը մահանալու գործընթացում՝ ախտանշանների վերահսկման նպատակով, կարող է կյանքի կրճատման փոքր վտանգ առաջացնել: Քանի որ այս միջոցները ուղղված են բացառապես ախտանշանների վերահսկմանը, դրանք կարող են խրախուսվել:

Պալիատիվ բժշկությունը շատ դեպքերում կարող է տանելի դարձնել ցավն ու անհանգստությունը կյանքի վերջում: Սնուցումը և հեղուկները պետք է շարունակվեն այնքան ժամանակ, քանի դեռ դա օգնում է մահացող մարդուն՝ առանց անհանգստություն պատճառելու նրան:

Մարդու քրիստոնեական կերպարին համահունչ պետք է այն բանի վրա ուշադրություն դարձնել,

Լուսանկարները՝ Trsakaoe; kuprevich - stock.adobe.com

որպեսզի հնարավոր դառնա ծանր հիվանդների ու մահամերձների սիրառատ, խոհեմ և ուշադիր խնամքը հարազատների և մասնագետների կողմից հաճելի միջավայրում:

Մահացողների և նրանց շրջապատի համար կարևոր է Ավետարանի բովանդակության վրա հիմնված հոգու խնամքը, որն ապահովում է մշտական և հուսալի աջակցություն կյանքի մի փուլում, որտեղ շատ բան է փոխվում: Հոգու խնամքը կարող է նվազեցնել վախերը և մոբիլիզացնել մտավոր ու հոգևոր ուժը:

Կյանքի վերջում թերապիայի վերաբերյալ որոշումը պետք է կայացնի համապատասխան անձը: Այստեղ նա կարող է ստանալ բժիշկների ու հարազատների խորհուրդները: Եթե դա այլևս հնարավոր չէ, որոշումը պետք է կայացնեն հարազատները բուժող բժիշկների հետ միասին, որի համար անձնահատուկ նշանակություն ունի մահացող անձի ենթադրյալ կամքը: Հետևաբար, շատ դեպքերում օգտակար է ունենալ հիվանդի կտակը, որն արտահայտում է մահացողի կամքը:

Հրապարակված ուղեցույցներն ու օրենքները պետք է ընդունվեն այն պայմանով, որ դրանք չհակասեն քրիստոնեական արժեքներին:

Ամփոփում

Յուրաքանչյուր ոք ունի արժանապատվորեն մեռնելու իրավունք.

Էվթանազիան և պալիատիվ խնամքը վերաբերում են մահացողներին, որոնց համար բուժման կամ վիճակի բարելավման հեռանկար չկա: Քրիստոնեական տեսանկյունից սա կարող է օգնել միայն մահանալու ժամանակ և երբեք չօգնել մահանալուն: Սպանությունը պահանջի համաձայն և ինքնասպանության օժանդակությունը մերժվում են:

Կյանքը երկարացնող միջոցներից և ցավազրկող միջոցներից ձեռնպահ մնալու միջոցով մահանալը՝ կամ մահանալու գործընթացում հանգստանալը՝ ախտանշանները վերահսկելու համար կյանքի կրճատման ցածր ռիսկով, չեն հակասում քրիստոնեական հավատքի սկզբունքներին:

Մարդու քրիստոնեական կերպարի ֆոնին մեծ նշանակություն ունի պալիատիվ խնամքը: Մերձավոր մարդկանց աջակցությունը և հոգու խնամքը Ավետարանի ոգով կարող են նվազեցնել վախերը և մոբիլիզացնել մտավոր ու հոգևոր ուժերը: Հիվանդի կտակը կարող է օգնել մահացողների մասին հոգ տանել այնպես, ինչպես նրանք են ցանկանում:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243,8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիխ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, Ֆրանկֆուրտերթրասսե 233,63263 Նոյ-Իզենբուրգ / Գերմանիա
Խմբագիր՝ Փեթեր Յոհաննինգ

Մենք գնում ենք մեր տեմպերով

Ավարտվեց շրջանային առաքյալների աշնանային ժողովը: Ակնառու թեմաներն էին՝ եկեղեցական պաշտոնի ըմբռնումը, աստվածաշնչյան հեղինակների վերաբերյալ հարցերը և սպասավորների նոր ուղեցույցները:

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը և շրջանային առաքյալը շրջանային առաքյալների ժողովում

Լուսանկարը՝ Փեթեր Յոհաննինգ

Հեղինակների վերաբերյալ հարցերը կարևոր են շատ քրիստոնեական համայնքների համար. Պողոսի նամակի հեղինակը իսկապե՞ս Պողոսն է, թե՞ նրա աշակերտներից մեկը, ով գրել է Ավետարանները, և դրա հետ կապված շատ այլ հարցեր: Շրջանային առաքյալների ժողովը հստակ ասում է, որ նորառաքելական եկեղեցում խոսք չպետք է լինի լիազորության և գիտության միջև վեճի մասին:

«Մեզ համար կարևոր է ընդգծել, որ Սուրբ Գիրքը ներշնչված է Սուրբ Հոգով: Որոշիչ է ոչ թե հեղինակի մասին հարցը, այլ համապատասխան աստվածաշնչյան տեքստի բովանդակությունը: Ի՞նչ է ասում նա մեր փրկության, մեր փրկագնման մասին»,- այսպես է սկսում գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը իր ելույթը օրակարգի այս կետի վերաբերյալ:

Հեղինակությունը հեղինակների մասին հարց չէ

Այսպիսով, աստվածաշնչյան գրքերի իրական հեղինակն Աստվածն է: Աստվածաշնչյան գրությունների հեղինակությունը հիմնված է նրանց աստվածային ներշնչանքի վրա և կախված չէ հեղինակներից՝ եղել են նրանք առաքյալներ և մարգարեներ, թե՝ ոչ: Այս առումով, էկսեգետիկ բացահայտումը, թե արդյոք գրվածքն այս կամ այն հեղինակինն է, թե՝ ոչ, որևէ առնչություն չունի այս գրության հեղինակության հետ: Առաքյալի ուսուցանելու լիազորությունը չի ծառայում առանձին էքսեգետիկական խնդիրների լուծմանը: Ավելի շուտ, այն տրված է եկեղեցու ուսմունքի մաքրությունը և դրա տեղեկացումը ապահովելու համար:

Դավանաբանությունը նույնպես պարզ է այս հարցում: Այն ասում է. «Սուրբ Գրքերի հեղինակը Աստված է, նրա հեղինակները Սուրբ Հոգով ներշնչված մարդիկ էին: Աստված օգտագործեց նրանց հմտությունները, որպեսզի գրավոր ամրագրվի այն, ինչը պետք է նրա կամքով ավանդվեր: Բովանդակային առումով աստվածաշնչյան գրքերը, անշուշտ, ունեն Սուրբ Հոգու դրոշմը, բայց ձևի և արտահայտման կերպի առումով դրանք ունեն համապատասխան հեղինակների և նրանց պատկերացումների ազդեցությունը,, /ՆԱԴ 1.2):

Ուղեցույց սպասավորների համար

Մշակվում է սպասավորների համար նոր ուղեցույց: Այն պարունակում է եկեղեցու ղեկավարման եկեղեցական իրավական կանոնակարգեր այն մասին, թե ինչպես պետք է կատարվեն պաշտոնները և առաջադրանքները: Ի հավելումն հիմնական մեկնաբանությունների, կլինի մանրամասն գլուխ պաշտոնների կանոնակարգման, ժամերգության տեքստերի պարտադիր բնույթի, եկեղեցական խորհուրդների տոնակատարությունների և օրհնության արարողությունների վերաբերյալ: Ներառված են նաև ցուցումներ հոգու խնամքի, էկումենիկ հարցերի և հրապարակայնության հետ կապված աշխատանքների վերաբերյալ:

Շրջանային առաքյալները միաձայն ընդունեցին ամբողջ փաթեթը և հանձնարարեցին «Ուղեցույց սպասավորների համար» աշխատանքային խմբին՝ այն խմբագրելու և հրապարակման պատրաստելու :

Ինտենսիվ, բարեխիղճ խորհրդակցություններ

Կանանց հոգևոր ծառայության ձեռնադրության թեմայի շուրջ մանրամասն քննարկումից հետո շրջանային առաքյալները միաձայն պաշտպանեցին գլխավոր առաքյալի ընթացակարգային առաջարկը՝

Այս թեման պահանջում է ինտենսիվ, բարեխիղճ խորհրդակցություն: Շրջանային առաքյալների տեսանկյունով չպետք է տպավորություն ստեղծվի, որ եկեղեցին թույլ է տալիս սոցիալական փոփոխություններով իր վրա ճնշում գործադրել: Նախկինում պաշտոնական աստվածաբանական պատասխան չկար այն հարցին, թե արդյոք կան աստվածաշնչյան պատճառներ կանանց ձեռնադրության դեմ: Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը հստակեցնում է, որ հետագա քննարկման հիմքը ստեղծվել է վերջերս հրապարակված կանանց և տղամարդկանց նույն պատկերով ստեղծված լինելու փաստաթղթով:

Այն, ինչին հետևում ենք, դա հայացքն է եկեղեցուն, նրա ավանդույթներին, նրա արժեքներին: «Մենք ժամանակ ենք հատկացնում և հատկացնելու ենք մեր քննարկումներին- և հենց որ բոլոր որոշումները կայացվեն - կհրապարակենք բովանդակային հայեցակարգ, ինչպես արեցինք 2019 թվականին՝ պաշտոն հասկացության վերաբերյալ»: Այն փաստարկները բոլոր նրանց, ովքեր այս առումով պահպանողական մտածողություն ունեն և վախենում են, որ նվիրական ավանդույթները կվերանան, պետք է այնքան լրջորեն ընդունվեն, որքան մյուսների ցանկությունները, ովքեր ցանկանում են փոփոխություններ և քննարկումների ավելի արագ տեմպեր: «Մենք գնում ենք մեր սեփական տեմպերով, մենք որոշումներ ենք կայացնում Նորառաքելական եկեղեցու համար որպես ամբողջություն, ոչ թե՝ այս կամ այն կողմի համար», - ամփոփում է գլխավոր առաքյալ Շնայդերը:

Եկեղեցու, հաղորդության և պաշտոնի ըմբռնում

Նա խոսքը շարունակելով ասաց, որ Նորառաքելական եկեղեցում միշտ էլ փոփոխություններ են եղել, և դրանք անհրաժեշտ են եղել: Գլխավոր առաքյալ Ռիչարդ Ֆեիրը 1990-ականներին սկսեց նախապատրաստվել Նորառաքելական դավանաբանության ստեղծման աշխատանքները: Այդ ժամանակ պետք է որոշվեր, թե Հիսուս Քրիստոսի եկեղեցու վերաբերյալ ինչ ըմբռնում պետք է ներկայացնի դավանաբանությունը:

Մինչ այդ ասվում էր, որ Նորառաքելական եկեղեցին Քրիստոսի եկեղեցին է, որը հիմնովին վերանայվում է և փոխվում մանրակրկիտ խորհրդակցության միջոցով: Թեև սա որոշակի անհանգստություն ստեղծեց շատ համայնքներում, սակայն դա անխուսափելի էր, որպեսզի լրջորեն մոտենան դավանաբանությանը: «Տարիներ պահանջվեցին», - ամփոփում է առաքյալը:

Փոփոխության շարունակականություն

Գլխավոր առաքյալ Վիլհելմ Լեբերը նպաստեց դավանաբանությանի ստեղծմանը և իր պաշտոնավարման ընթացքում նվիրվեց խորհուրդները հասկանալու մեծ թեմային: 2006թ. հունվարի 24-ին նրա վարած այսպես կոչված «Ուստեր- երեկոն» անմոռանալի է՝ ճանաչվեց մկրտությունը այլ եկեղեցիներում և նորովի նկարագրվեց մկրտության և կնքման հարաբերությունը:

Գլխավոր առաքյալ Ժան-Լյուք Շնայդերը շատ ժամանակ ու ջանք է գործադրում պաշտոն հասկացության և դրա հետ կապված կանանց ձեռնադրության հարցերի ըմբռնման համար: Այս առումով եկեղեցու առաջնորդն ասում է. «Այս թեմայի հետ առնչվելիս մենք հասկացանք, թե որքան ընդարձակ և խորն է այս թեման: Բավական չէ պարզապես այո կամ ոչ ասելը: Անկախ այն բանից, թե ինչ արդյունք կունենան քննարկումները, թեման չափազանց կարևոր է, այն չպետք է հապճեպ լուծվի, այլ պետք է հաշվի առնվի հասարակական միտումները»:

Տեղեկատու

03.07.2022	Գոմա (Կոնգոյի ԴՀ)
07.07.2022	Լիմեթե Կինշասա (Կոնգոյի ԴՀ)
08.07.2022	Մբանդակա (Կոնգոյի ԴՀ)
10.07.2022	Կինշասա (Կոնգոյի ԴՀ)
24.07.2022	Փաիդե (Էստոնիա)
27.07.2022	Բոնաիրե (Անթիլներ)
30.07.2022	Փարամարիբո (Սուրինամ)
02.08.2022	Քինգսթոն (Ջամայկա)
04.08.2022	Սան Սալվադոր (Սան Սալվադոր)
07.08.2022	Մեքսիկա (Մեքսիկա)
14.08.2022	դեռ չի որոշվել (Ուկրաինա)
11.09.2022	Ֆրայբուրգ (Շվեյցարիա)
18.09.2022	Իսերլոհն (Գերմանիա)
22.09.2022	դեռ չի որոշվել (Գամբիա)
24.09.2022	դեռ չի որոշվել (Սենեգալ)
25.09.2022	դեռ չի որոշվել (Գվինեա-Բիսաու)

New Apostolic Church
International